ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2022թ. N ----Ն

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՓՈՂՈՑՆԵՐ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ. 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Այգեստանի հետևյալ փողոցներն անվանակոչել մեծանուն համալսարանականների անուններով.

1) Այգեստանի 1-ին փողոցը՝ պետական, հասարակական, քաղաքական գործիչ Նիկոլ Աղբալյանի անվամբ՝ «Նիկոլ Աղբալյան փողոց»,

2) Այգեստանի 2-րդ փողոցը՝ լեզվաբան, գրականագետ Մանուկ Աբեղյանի անվամբ՝ «Մանուկ Աբեղյան փողոց»,

3) Այգեստանի 3-րդ փողոցը՝ իրավաբան, հրապարակախոս Գրիգոր Չուբարյանի անվամբ՝ «Գրիգոր Չուբարյան փողոց»,

4) Այգեստանի 4-րդ փողոցը՝ տնտեսագետ, պատմաբան Թադևոս Ավդալբեգյանի անվամբ՝ «Թադևոս Ավդալբեգյան փողոց»,

5) Այգեստանի 5-րդ փողոցը՝ մաթեմատիկոս Սերգեյ Մերգելյանի անվամբ՝ «Սերգեյ Մերգելյան փողոց»,

6) Այգեստանի 7-րդ փողոցը՝ բուսաբան Արմեն Թախտաջյանի անվամբ՝ «Արմեն Թախտաջյան փողոց»,

7) Այգեստանի 9-րդ փողոցը՝ ֆիտոֆիզիոլոգ Միքայել Չայլախյանի անվամբ՝ «Միքայել Չայլախյան փողոց»,

8) Այգեստանի 11-րդ փողոցը՝ լեզվաբան, հայագետ Գևորգ Ջահուկյանի անվամբ՝ «Գևորգ Ջահուկյան փողոց»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ **ԼԵՎՈՆ ԶԱՔԱՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՓՈՂՈՑՆԵՐ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայ հասարակական-քաղաքական գործիչ, գրականագետ, մանկավարժ **Նիկոլ Աղբալյանը** ծնվել է 1873 թվականին Թիֆլիսում: Նախնական կրթությունն ստացել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, այնուհետ՝ Գևորգյան ճեմարանում: Ուսանել է Մոսկվայի, Լոզանի, Սորբոնի համալսարաններում: Ուսուցչություն է արել Կաղզվանում, Շուշիում, Թիֆլիսում և այլուր: Առաջին աշխարհամարտի սկզբից դարձել է Ազգային բյուրոյի, ապա՝ խորհրդի և կամավորական գնդերի կարգադրիչ անդամ, զբաղվել է հայ գաղթականների տեղափոխման հարցերով: 1918-1920 թվականներին եղել է ՀՀ խորհրդարանի անդամ, իսկ 1919 թվականին նշանակվել է լուսավորության և արվեստի նախարար:

Հայաստանում խորհրդային իշխանություն հաստատվելուց հետո՝ 1921 թվականին, նախ բանտարկվել է, ապա Խորհրդային Հայաստանից տարագրվել է արտասահման: 1930 թվականից բնակություն է հաստատել Բեյրութում և եղել է Համազգային Նշան Փալանճյան ճեմարանի հիմնադիրը՝ Լևոն Շանթի հետ, որտեղ և դասավանդել է մինչև կյանքի վերջը: Նիկոլ Աղբալյանը մահացել է 1947 թվականին Բեյրութում:

Լեզվաբան, գրականագետ **Մանուկ Աբեղյանը** ծնվել է 1865 թվականի մարտի 17-ին Նախիջևանի Աստապատ գյուղի մոտ գտնվող Թազաքենդ գյուղում:

Մանուկ Աբեղյանը 1876 թվականին ընդունվել է Էջմիածնի Գևորգյան ճեմարան:

1893-1898թթ Եվրոպայում ուսանելու տարիներին Աբեղյանը գործուն մասնակցություն է ցուցաբերել նաև տեղի հայ ուսանողության միության աշխատանքներին:

1898 թվականին, երբ Մանուկ Աբեղյանը վերադառնում է Թիֆլիս, անմիջապես Գևորգյան ճեմարանի տեսչությունը նրան հրավիրում է ճեմարանում դասախոսելու հայոց լեզու, գրականություն, պատմություն, աշխարհագրություն և գերմաներեն լեզու: Աբեղյանն ընդունում է հրավերը և մեկնում Վաղարշապատ: Ստանձնելով ճեմարանի ուսուցչի պաշտոնը՝ նա սկսում է դասավանդել թե՛ դպրոցական և թե՛ լսարանական բաժիններում: Աբեղյանը 1900-ականներին իր գիտական մտքի արդյունքներով աստիճանաբար սկսում է գերիշխող դառնալ հայագիտության մեջ: Նրա գիտա-հասարակական գործունեությունը նոր թափ ու ծավալ է ստանում Հայաստանի խորհրդայնացման շրջանում:

1925թ. թվականին Աբեղյանն ընտրվում է Հայաստանի Կենտրոնական գործադիր կոմիտեի անդամ և հետագա տարիներին (1927, 1929) դարձյալ վերընտրվում: 1929 թվականին Աբեղյանն ընտրվում է Անդրկովկասի Կենտգործկոմի անդամ, իսկ դրանից առաջ՝ 1927 թվականին, Երևանի քաղաքային խորհրդի անդամ: Նրա 1930-ական թվականների գիտահետազոտական գործունեության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում հայ ժողովրդական վեպը՝ «Սասնա ծռեր»-ը: Ակադեմիկոս դառնալուց հետո Աբեղյանը շարունակում է աշխատել «Հայոց հին գրականության պատմության» երկրորդ հատորի վրա: Սակայն պատերազմական ծանր օրերը, ռազմաճակատում անհետ կորած որդու վիշտը, օրըստօրե վատթարացնում են նրա առողջությունը և 1944 թվականի սեպտեմբերի լույս 25-ի գիշերը Աբեղյանը մահանում է:

Հայ իրավաբան, հասարակական, քաղաքական գործիչ, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ **Գրիգոր Չուբարյանը** ծնվել է 1888 թվականի հուլիսի 6-ին, Թոփթի (գյուղ Ղրիմ՝ Ռուսաստանի Դաշնության Ռոստովի մարզի Մյասնիկովի շրջան) գյուղում: Միջնակարգ կրթությունն ստացել է հայրենի Նախիջևանում, ապա 1913 թվականին

ընդունվել է Յարոսլավլի (Ռուսաստան) համալսարանի իրավաբանական ֆակուլտետը և Մոսկվայի պետական համալսարանի պատմագրական (1913, էքստեռն) ֆակուլտետները:

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո 1919 թվականին տեղափոխվել է Հայաստան, մշտական բնակություն է հաստատել Երևանում: 1920-1924 թվականներին վարելով ՀԽՍՀ արդարադատության ժողովրդական կոմիսարի առաջին տեղակալի պաշտոնը՝ Գրիգոր Չուբարյանը ղեկավարել է հանրապետության կարևորագույն օրենսդրական ակտերի և դեկրետների մշակման, կոդավորման և հրատարակման գործը: 1920 թվականին Չուբարյանը հրավիրվել է Երևանի պետական համալսարան, եղել հիմնադիր դասախոսներից և դասախոսել մինչև 1937 թվականը:

Ենթարկվել է բռնաճնշումների ու հալածանքների, աքսորվել (բոլոր աշխատությունները ոչնչացվել են), այնուհետև 1956 թվականին արդարացվել է և շարունակել աշխատանքը Երևանի պետական համալսարանում:

1961 թվականին արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչմանը:

Գրիգոր Չուբարյանը մահացել է 1962 թվականի սեպտեմբերի 6-ին Երևանում:

Հայ խորհրդային տնտեսագետ, հայագետ, հրապարակախոս, գրականագետ, պատմաբան և բառարանագետ **Թադևոս Ավդալբեգյանը** ծնվել է 1885 թվականին, Իրանի Պարսպատունիքի Մակու քաղաքում, դարբնի ընտանիքում: 1907 թ. ավարտել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանը: Առաջադիմական հայացքներ պրոպագանդելու համար եղել է քաղաքական վտարանդի Եվրոպայում (1913-1917):

Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումից հետո Երևանի պետական համալսարանում դասավանդել է հայ հասարակական մտքի պատմություն և տնտեսագիտական զարգացման պատմություն: Հեղինակ է արժեքավոր բազմաթիվ հետազոտությունների, որտեղ գիտականորեն մեկնաբանված են տնտեսագիտության, Հայաստանի տնտեսական զարգացման, հայ հասարակական հոսանքների ձևավորման, հայ գրականության և պատմության էական հարցեր:

Մեծ է Ավդալբեգյանի դերը հայ բառարանագրության բնագավառում: Նա «Ռուս-հայերեն նոր բառարան»-ի (հրատարակված 1-2, 1933-1935) հեղինակներից է, հեղինակը «Ռուս-հայերեն տնտեսագիտական տերմինների բառարան»-ի (1964): Ավդալբեգյանը գերմաներենից թարգմանել է Կարլ Մարքսի «Կապիտալ»-ի 1-ին հատորը (հրատարակված 1933):

Ավդալբեգյանը մահացել է 1937թ. հունվարի 26-ին:

Հայ մաթեմատիկոս, ԽՍՀՄ պատմության մեջ ամենաերիտասարդ գիտությունների դոկտոր **Սերգեյ Մերգելյանը** ծնվել է 1928 թվականի մայիսի 19-ին Սիմֆերոպոլում՝ հայկական ընտանիքում:

1947 թվականին Մերգելյանն ավարտել է Երևանի Պետական Համալսարանը: 1945-1957 թվականներին աշխատել է ԵՊՀ-ում, 1954-1958 և 1964-1968 թվականներին Մոսկվայի Լոմոնոսովի անվան համալսարանում: Սերգեյ Մերգելյանը նաև գիտության հմուտ կազմակերպիչ է եղել: 1956 թվականին հիմնադրվել է Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտ (ԵրՀԻԻՄՄ), որը նա ղեկավարել է 1956-60 թվականներին: Այնուհետև ինստիտուտը հայտնի է դարձել որպես Մերգելյանի ինստիտուտ: Այդ ոչ պաշտոնական անվանումը մինչ օրս պահպանվում է:

1963 թվականին նա ընտրվել է ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, քարտուղարի տեղակալ: Նա եղել է ԽՍՀՄ ԳԱ Ստեկլովի անվան Մաթեմատիկայի ինստիտուտի կոմպլեքս անալիզի բաժնի հիմնադիրը և ղեկավարը: Այդ պաշտոնում նա մնացել է մինչ 2002 թվականը: Նույն թվականին վերականգնվել է Լոմոնոսովի

Համալսարանի պրոֆեսորի իր հաստիքում: 1968 թվականին Մերգելյանը կրկին հրաժարվել է պրոֆեսորի հաստիքից և զբաղվել միայն գիտական գործունեությամբ:

Շնորհիվ Մերգելյանի կազմակերպական տաղանդի՝ Հայաստանը դարձել է այդ ուղղությամբ ԽՍՀՄ հիմնական կենտրոններից մեկը:

Մերգելյանը մահացել է 2008 թվականին Լոս Անջելեսում՝ երկարատև հիվանդությունից հետո:

Հայ բուսաբան **Արմեն Թախտաջյանը** ծնվել է 1910 թվականի հունիսի 10-ին Շուշի քաղաքում:

1954 թվականից Թախտաջյանի խմբագրությամբ լույս է տեսել «Հայաստանի ֆլորան» (հ. 1-6, 1954-1973, ռուսերեն): 1945 թվականին Ա. Ֆեդոտովի հետ հրատարակել է «Երևանի ֆլորան» (1972 թվական, ռուսերեն): Զբաղվել է նաև Հայաստանի բրածո բույսերի հարցերով: Եղել է կենսաբանական գիտությունների միջազգային միության բուսաբանության բաժանմունքի (1975 թվականից) և բույսերի տաքսոնոմիայի գծով միջազգային ասոցիացիայի (1975 թվականից) նախագահ: Նա ակտիվ մասնակցություն է ունեցել «Բույսերի կյանքը» բազմահատորյակի հրատարակությանը:

Արմեն Թախտաջյան մահացել է 2009 թվականին:

Հայ խորհրդային ֆիտոֆիզիոլոգ Միքայել Չայլախյանը ծնվել է 1902թ. Նոր Նախիջևանում (Ռուսական կայսրություն):

Չայլախյանի գիտական աշխատանքները հիմնականում վերաբերում են բույսերի աճման ու զարգացման հարցերին, օնտոգենեզի ընդհանուր օրինաչափությունների մշակմանը, գեներատիվ զարգացման սնուցողական և հորմոնային գործոնների բացահայտմանը: Նա բույսերի զարգացման ու ծաղկման հորմոնային տեսության հիմնադիրն է: Այդ տեսությունը համաշխարհային ճանաչում է բերել Չայլախյանին:

Չայլախյանը մահացել է 1991 թվականին Մոսկվայում:

Հայ ականավոր բանասեր, լեզվաբան, հայագետ **Գևորգ Ջահուկյանը** ծնվել է 1920թ. Մեծավանում (Ալեքսանդրապոլի գավառ, Հայաստանի Առաջին Հանրապետություն):

1941 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանը: 1945 թվականից դասախոսել է ԵՊՀ ռոմանոգերմանական բանասիրության ֆակուլտետում, 1948-1957 թվականներին՝ Երևանի Վալերի Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների ինստիտուտում:

1962 թվականից եղել է Հրաչյա Աճառյանի անվան լեզվաբանության ինստիտուտի տնօրեն, Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս:

1942-1943 թվականներին ծառայել է խորհրդային բանակում: 1945 թվականից մինչև իր կյանքի վերջը դասախոսել է պետական համալսարանում՝ դասավանդելով հայոց լեզու, գրաբար, լատիներեն, լեզվաբանության պատմություն, համեմատական քերականություն, ընդհանուր լեզվաբանություն և այլ առարկաներ:

1947 թվականին պաշտպանել է թեկնածուական, 1955 թվականին՝ դոկտորական ատենախոսություններ: 1958 թվականին ստացել է պրոֆեսորի կոչում, 1968 թվականին ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, 1974 թվականին՝ ակադեմիկոս:

Գևորգ Ջահուկյանը գիտության վաստակավոր գործիչ է, ՀԽՍՀ պետական մրցանակի դափնեկիր, պարգևատրվել է «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» և բազմաթիվ այլ շքանշաններով ու մեդալներով:

Այգեստանի նշված փողոցները մեծանուն համալսարանականների անուններով անվանակոչելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել Երևանի պետական համալսարանի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը։

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԼԵՎՈՆ ԶԱՔԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՓՈՂՈՑՆԵՐ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում փողոցներ անվանակոչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՓՈՂՈՑՆԵՐ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում փողոցներ անվանակոչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԼԵՎՈՆ ԶԱՔԱՐՅԱՆ